


ՄԱԹԵՎՈՍՅԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

(ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ
ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԾՆՆԴՑԱՆ 70 - ԱՄՅԱԿԻՆ)

1



Կ Ա Ն Ա Ձ Ո Ր - 2005


Լույս է տեսնում «Լոռու դպրոց» հիմնադրամի
(նախագահ՝ Լոռու մարզպետ Յենրիկ Քոչինյան)
հովանավորությամբ

«Լոռին Հայաստանում եղել է, կա և մնալու է որպես մշակութային
ուրույն խոշոր միավոր:

Չրանտ Սաքևոսյանը Լոռու գրական դպրոցը պայմանավորող ու
ներկայացնող Լոռու ձորից տիեզերք ելած այն լուսատունն է, որով 20-րդ
դարի հայ իրականությունը ներկայանալու է ապագային:

Որպես լոռեցի պատիվ եմ ունեցել ոչ միայն նրա ընթերցողն ու
ժամանակակիցը, այլև նաև գրուցակիցն ու մտերիմը, նրա պայծառ
մտքի ու գուլալ խոսքի ունկնդիրն ու ընկալողը լինելու»:

*«Մաշտոց», 2003, 2
Տեխն. գիտ. քեկն.; պրոֆ. Յենրիկ Քոչինյան*



*«Էս գյուղը մեկ մեռելատերն է հիշում, մեկ էլ իր համար
քաղաքում բերդի պես տուն կապողը. անտառում կաղնի
չմնաց, հանդերում խաչքարչմնաց – կողոպտած տանում են»:*

Հրանտ Մաթևոսյան

ՄԱԹԵՎՈՍՅԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

(ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՎԻՐԿԱԾ
ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԾԵՆԴՅԱՆ 70 - ԱՄՅԱԿԻՆ)

МАТЕВОСЯНОВСКИЕ ОТГОЛОСКИ

(РЕСПУБЛИКАНСКАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ,
ПОСВЯЩЕННАЯ 70-ЛЕТИЮ ГРАНТА МАТЕВОСЯНА)

REFLECTIONS ON MATEVOSYAN

(REPUBLICAN SIMPOSIUM DEDICATED TO THE
70th ANNIVERSARY OF HRANT MATEVOSYAN)

1

ԱՐՄԻՆՖՈ
ՎԱՆԱԶՈՐ - 2005

ՀՏԴ 891.981.0
ԳՍԴ 83.3 Հ
Ս 151

Հրատարակվում է Վանաձորի պետական մանկավարժական
ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ
Հրատարակության են նրաշխատրել հայոց լեզվի և
գրականության ամբիոնները

Խմբագիրներ՝ Բ.գ.դ. Դավիթ Գասպարյան
բ.գ.դ. Լևոն Եզեկյան
բ.գ.դ. Գուրգեն Խաչատրյան
բ.գ.թ. Ալբերտ Դողոսյան
բ.գ.թ. Արեն Սանթրյան
բ.գ.թ. Վալերի Փիլոյան
բ.գ.թ. Արտակ Սարուխանյան

Presented for publication by the Armenian language department
of the Vanadzor State Teachers' Training Institute
Recommended for publication by the Scientific Council
of the Vanadzor State Teachers' Training Institute

Editing staff D. Gasparyan, L. Yezekyan, G. Khachatryan, A. Poghosyan, V. Piloyan,
A. Santoyan, A. Sarukhanyan

Представлено на публикацию кафедрой армянского языка
Ванадзорского Государственного Педагогического Института
Рекомендовано на публикацию Ученым Советом
Ванадзорского Государственного Педагогического Института

Редакционная коллегия Д. Гаспарян, Л. Езекиян, Г. Хачатрян, В. Пилоян,
А. Погосян, А. Сантоян, А. Саруханиян

Ս 151 ՄՍԹԵՎՈՍՅԱՆԱԿԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐ, հ. 1 - խմբ. Գ.Գասպարյան,
Լ.Եզեկյան, Գ.Խաչատրյան, Ա.Դողոսյան, Ա.Սանթրյան, Վ.Փիլոյան,
Ա.Սարուխանյան – Վանաձոր, Արմինֆո, 2005, 135 էջ:

Գնալով ամուսն է բանասիրական մտքի հետաքրքրությունը Մաթևոսյանի արձակի
նկատմամբ: Դրա լավագույն առիավատյան մեծ զրոյի ծննդյան 70-ամյակին նվիրված
«Մաթևոսյանական արձագանքներ» խորագիրը կրող գիտական նստաշրջանը և վերջի-
նիս նյութերի այս ժողովածուն է, ուր գետեղվել են Հայաստանի մշակութային կենտրոննե-
րից՝ Երևանից, Գյումրիից, Վանաձորից ու Գորիսից, այլև հենց Ահնիձորից գիտաժողովին
մասնակցած բանասերների ուսումնասիրությունները:

Ս 4603010000
Ս 0049(01)-2005 2005

ԳՍԴ 83.3 Հ

ISBN 99941-959-2-1

© Խմբագրական կազմ

դովրդական խոսքի և հատկապես դարձվածների՝ գեղարվեստական արձակ մուտնում Գ.Սաթևոսյանը կատարել է իր նախորդների՝ Խ.Աբովյանի, Գ.Թումանյանի, Ա.Բակունցի օրինակներով: Գետնելով կենդանի խոսքի պահպանմանը, ցանկանալով ընթերցողին հաղորդակից դարձնել իր և իր հերոսների խոհերին՝ գրողը դիմել է ազատ ու անկաշկանդ խոսքին: Գ.Սաթևոսյանի գրեթե բոլոր ստեղծագործություններում էլ նկատվում է գրողի բուռն հակումը ժողովրդական լեզվի նկատմամբ: Այլ կերպ չէր էլ կարող լինել. քենատիկայի և քենայի ընտրությունը հեղինակին ուղեկցել է կենդանի խոսակցական լեզու, ու տարված հերոսների խնդիրներով՝ գրողն ամեն կերպ ցանկացել է լեզվի գերապատվության հարց չդնել, այլ պարզապես ընտրել գեղարվեստականացման այն տարրը, որ կարող է գունեղ դարձնել պատկերը, համակել ընթերցողին և բացահայտել ազգային մտածողության՝ դարերից եկող հատկանիշները: Դարձվածները ամենաընդհանուր, միաժամանակ լեզվական առումով ամենաբարդ ձևերն են գեղարվեստական խոսքի ամբողջացման համար: Գեղինակի՝ տարբեր բնույթի դարձվածների իմացությունը և գեղարվեստական խոսքում դրանց պատշաճ օգտագործումը մի տեսակ դինամիկություն են հաղորդել արձակի լեզվին: Ավելին՝ Գ.Սաթևոսյանը դրանցից շատերը պարզապես մշակել է, բայց հիմնականում չի խախտել դարձվածին հատուկ լեզվախաղն ու իմաստային հատկանիշը: Դարձվածների փոփոխության ձևերը լեզվի զարգացման գործառույթում խիստ տեսանելի են հատկապես Գ.Սաթևոսյանի արձակում:

Կարելի է հանդիպել դարձվածների, որ տարածված են կամ ընդհանուր գործածության արժեք ունեն. սա հեղինակի ճանաչողական դրսևորումն է, ժողովրդախոսակցականին խիստ հարագատ մնալու հաջողված փորձն է, լեզվի՝ ընդհանուրի ճանաչմանը հասցնելու հնարանքը: Այդպիսից գրողը գործածել է տարբեր նպատակներով. ասենք՝ որևէ երևույթի բացահայտման համար գրական լեզուն միշտ չէ, որ հարմար տարբերակներ է ունենում. «Իսկ *աչքով անել*՝ էլ չի պատահում, որ իրար *աչքով անեն*» Աձ. 16/, խոյս է տվել ձևերի կրկնությունից. «*տեղեկացնել*» բառի կրկնությունից խուսափելու համար դրել է «*իմաց տալը*». «...կամաց դոփեց գետինը՝ *իմաց տալով*, որ ինքը եկել է» Աձ. 26/, կամ՝ առավելությունը տվել է բարբառային ձևին, որը, այնուամենայնիվ, գրականում գործածվող բառից իմաստային տարբերակիչ երանգ ունի. «...և անթև սպիտակ շապիկավորը *ակամջ է դնում*, հետո հայիոյց՝ ես բու ծնողը...» ԱՍ. 297/ և այլն: Զավազանց շատ են հանդիպում դարձվածային բառաձևեր, որ համընդհանուր են և գրողի, և՛ հերոսների խոսքերի համար՝ *վիզ ծոել* /Բ. 291/, *պորտը մաշել* /Ա.ձ.ս. 131/, *սիրտը ցավել* /Բ. 273/, *գետինը մտնել* /Ա.ձ.ս. 93/, *մեքքը կոտրել* /Ա.ձ.ս. 108/, *սիրտը սևանալ* /Ա.ձ.ս. 65/, *պինդ հասակ* /Ա.ձ.ս. 45/, *գրողը տանի* /Աձ. 26/, *մաից տանել* /Աձ. 9/, *լողացող անպեր* /Աձ. 28/, *զանգակ աղբյուր* /Աձ. 28/, *սրտի անկյուն* /Աձ. 40/, *աչքը կպցնել* /Աձ. 41/, *աչքի անկյուն* /Ա.ձ. 431/, *սպուշ կտրել* /Բ. 317/, *սիրտը բորբալ* /Բ. 334/, *սատանի ծուտ* /Թ.օ. 339/, *սրտի դող* /Ա. 374/, *սիրտը խաղալ* /Դ. 501/, *մերկ երանակ* /Բ.Ն.տ.հ.լ. 533/, *աչքը ծանր* /Ա.ա. 11/, *աչքի ընկնել* /Ա.ա. 42/, *մաքուր սիրտ* /Ա.ա. 89/ և այլն: Քննությունից պարզվում է, որ բայական կապակցությամբ

ԴԱՐՉՎԱԾՆԵՐԸ ԳՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՉԱԿՈՒՄ

Մինք Բուճուճց
(բ.գ.թ., Գորիս)

Գ.Սաթևոսյանի արձակն ընդհանրապես ուշագրավ է լեզվի տարբեր մակարդակներում դիտարկելու տեսակետներից, սակայն դարձվածաբանական դաշտում կատարվող սույն քննությունը նպատակ է հետևում տեսանելի դարձնելու գրական և ժողովրդական տարբերակների կապը և տարբերությունները, գեղարվեստական արձակի լեզվի զարգացման միտումները, հեղինակի գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները: Գ.Սաթևոսյանի գեղարվեստական արձակը առավել քան հատկանշվում է դարձվածների առատ կիրառությամբ: Ստեղծագործության համար ընտրելով ժողովրդական կենդանի լեզուն՝ հեղինակը ամենից առաջ կարևորել է դարձվածները, որ մեծ առատությամբ առկայանում են քե՛ հեղինակի և քե՛ հերոսների խոսքերում:

Ազգային լեզվամտածողության, ժողովրդի հոգեբանության, իրականության ամենավառ արտացոլումները գեղարվեստական խոսքի դարձվածային շարքի կառուցման և իմաստային առանձնահատկության մեջ են դրսևորվում: Ժո-

դարձվածները ավելի շատ են, քանի որ կապակցելիության տեսակետից բայը լրացյալ լինելու ամենալայն հնարավորությունն ունի: Բայական դարձվածների սովոր մասը հարադրական բարդություն է, որ հեղինակի կողմից գերադասվել է գրական լեզվում տարածված, ոճական երանգավորում չունեցող բայերից: Սովորաբար հարադրությունները բնորոշ են հայ արձակի լեզվին, և քվում է՝ բառային ոչ միաշեշտությունը խոսքը կարող է դարձնել տարտամ, միապաղաղ, բայց մաքրախոսական լեզվում ամենևին էլ այդպես չէ. նպատակը ոչ միայն կոնկրետ այս կամ այն երևույթի բացահայտումն է, այլև մի տեսակ գունավորումը: Պարզ գործողության՝ հարադիր բայական դարձվածով արտահայտելը նախ և առաջ տրամադրություն է ստեղծում. խոսքում պատկերավոր նկատվում են գործողության ընթացականությունը, ժամանակը, շարժումը, եղանակը: Բանավոր խոսքին բնորոշ դարձվածների առատ գործածությունը ընդհանրապես ազդում է լեզվի ամբողջ կառուցվածքի և հատկապես՝ ոճի վրա: Դարձվածային տրամադրությամբ ամբողջ նախադասությունը և ապա պարբերությունը դառնում են խոսքի կապակցելիությամբ անկաշկանդ, իսկ հաճախ էլ՝ բարբառային: Դարձվածին բնորոշ առոգանությամբ, հնչերանգությամբ է ընթերցվում ամբողջ ստեղծագործությունը, և բանավոր խոսքին ոչ բնորոշ տարրի միջամտությունը անմիջապես նկատվում է մինչև մյուս դարձվածի սահմանը, որից սկսվում է ոճական այն համերանգը, որ բնորոշ է ժողովրդական խոսքին: Փաստորեն, խոսքի ժողովրդական բնույթ-երանգի ստեղծելը դարձվածների միջոցով ստեղծագործությունը դարձնում է «ծնակունների» կամ «հովիվների հանրապետության» բնակիչների լեզվամտածողության համապատկեր:

3. Մաքրախոսային գեղարվեստական արձակի դարձվածները կարելի է քննել իմաստաբանական, բառակազմական կամ այլ մակարդակներում, բայց պատշաճ ուսումնասիրություն անցկացնելու նպատակը ենթադրում է ոճերը խմբավորել քերականական մակարդակում, ապա մասնավորել մյուս հատկանիշները՝ ըստ անհրաժեշտության:

Ածականական արժեքով դարձվածները առավել շատ գործածվում են հեղինակի խոսքում, և, փաստորեն, մեծ մասը նորակազմություն է, որ ստեղծվել է բանավոր խոսքում տարածված կառույցների նմանակությամբ՝ *մաշված սրամտություն* /Ած. 30/, *պինդ հասակ* /Մ.ձ.Ս. 45/, *մաշված թղթեր* /Բ. 249/, *ժանգոտ աչքեր* /Բ. 279/, *մարած աչքեր* /Թ.Օ. 438/, *հանգած բերան* /Խ. 106/, *լպրծուն խոսք* /Խ. 106/, *սառը հաչոց* /Խ. 149/, *արդար գլուխ* /Խ. 165/, *խավար աչք* /Տաշ. 290/ և այլն: Եիշտ է, սրանցում ղեռ հատկանշական է առարկայական իմաստը և նախադասություններում էլ ավելի շատ գոյականաբար են առնվում համապատասխան կիրառությամբ, սակայն հաճախականություն ստանալուց հետո, կարծում ենք, շոշափելի կլինի իրական նշանակությունը:

3. Մաքրախոսային արձակում բայ լրացյալով կազմությունները ամենաշատն են: Բայական դարձվածները առավել առկայանում են հարադրական բարդությամբ, և իզուր չէ, որ այդպիսիք հիմնականում քննվում են բառակազմության մակարդակում՝ համարելով հարադրյալ բայերի՝ որպես դարձվածային արտահայտության յուրահատուկ դրսևորումներ:

3. Մաքրախոսային արձակի հուզարտահայտչականության պահպանման, պատկերների գունագեղման, բառապաշարի բազմազանության և ուրույն ոճավորման նպատակով բավական շատ է գործածել բայական դարձվածները: Նա, ինչպես և Ա. Բրուկյանն ու Ա. Բակունցը, առանձին հակում է ունեցել դեպի յուրահատուկ իմաստով հարադրական բայերը, որոնց «արտահայտությունների հիմքում ընկել են լեզվի բառային հիմնական ֆոնդի տարրերը, որպես խիստ կենսունակ ու ստեղծարար բառեր, և ժամանակի ընթացքում դրանք, բնականաբար, կրել են որոշ փոփոխություններ, հղկվել-կանոնավորվել են, կատարելագործվել են ձևի և բովանդակության տեսակետից, մասամբ դուրս են եկել գործածությունից ու համալրվել նորանոր ձևերով (որոնք կազմվել են հաճախ նմանությամբ կամ անալոգիայով)»² *մահը տարել* /Ած.Ց/ *աչք կպցնել* /Ած. 41/, *տանուլ տալ* /Մ.ձ.Ս. 64/, *սիրտը սևանալ* /Մ.ձ.Ս. 65/, *կրակն ընկնել* /Մ.ձ.Ս. 74/, *գետինը մտնել* /Մ.ձ.Ս. 93/, *մեջքը կոտրել* /Մ.ձ.Ս. 108/, *օղբ խաղալ* /Բ. 262/, *սիրտը խաղալ* /Բ. 50/, *ականքները սրել* /Մ.ձ.Ս. 60/, *սիրտը խլրտալ* /Խ. 190/ և այլն: Դժվար չէ նկատել, որ դարձվածների սեռային հատկանիշը դրսևորվում է կազմության բայական հարացույցում: Դարձվածի իմաստային ամբողջության թելադրանքով, սակայն, փոխվում է հարադրության սեռային ցուցիչը, ուստի այս տիպի կառույցները պետք է դասակարգվել ոչ թե բայի կազմությունը, այլ հարադրության իմաստի ամբողջությունը նկատի առնելով: Փաստորեն՝ 3. Մաքրախոսային արձակի լեզվի գրավորության ու գեղարվեստականացման գաղտնիքներից մեկն էլ հենց այս է. «Բերականական յուրաքանչյուր միջոցի ընտրությունը գեղարվեստական երկում ամենից առաջ պետք է ապահովի հաղորդող նյութի մատչելիությունն ու ըմբռնումը և ապա՝ խոսքի պատկերավորությունն ու հուզականությունը»³:

Քիչ չեն այն դարձվածները, որոնցում չեզոք-ներգործական հակադրությունը կազմում են ազատ կապակցություններում իբրև այդպիսի գույգեր չընկալվող բայերը, ուստի՝ բայական արժեք ունեցող չեզոք կամ ներգործական սեռ ունեցող կապակցությունները չունեն հակադրություններ, դրսևորվում են իբրև կայուն միավորներ՝ արձակի ոճի անհատականությունն ու ամբողջականությունը դրսևորող դարձվածներ: Դենց այդ ձևերի գործածությունն է ապահովում լեզվի ժողովրդայնությունն ու պարզությունը, օր.՝ «*Քարը քարին մնացել է մինչև մեր օրերը, մի կաղնու կյանք*» /Ած. 9/, «*Մի երկու տարի հարցուփործ էին անում, դատում, վճռում, վճռածը դեն նետում*, նորից դատում և...» /Ած. 26/, «*Չին ծնելու էր, ցավի վրա էր փախել*» /Ած. 27/, «*Այրտեղ, զովի և շոգի սահմանազլխին, գետը ծունկ է տայիս*» /Մ.ձ.Ս. 49/, «*Տասնհինգ օրվա մեջ մի կանաչ արև բացվեց*, արևի հետ Աղիլխանյանը ճանապարհ ընկավ...» /Մ.ձ.Ս. 56/, «*Անդարդ Ավազը զարմացած սուլեց*, իսկ խնամի Իշխանի *բերանում պատառը ստառվ*» /Մ.ձ.Ս. 71/, «- Ես քեզ ֆելիետոնի կտամ, հիմար, *օրվա հացից զրկել կտամ*...» /Մ.ձ.Ս. 76/, «- Բուռ-բուռ ստանում է, բուռ-բուռ էլ ծախսում. ընկերների հետ նա մի գիշերում չուրս հարյուրի *զլխին քար է զգուն*» /Ա.Վ. 37/ և այլն:

¹ Օրինակները բերված են Դրանտ Մաքրախոսյան, Երկեր, Ե., 1985:

² Ա. Մուրվայան, Դայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955, էջ 195:

³ Լ. Եզեղյան, Դրանտ Մաքրախոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Ե., 1986, էջ 19:

Մակբայական և այլ արժեք ունեցող դարձվածներ նույնպես կան, սակայն ուսումնասիրության համար առաջնային չեն, ուստի չեն քննվում, չնայած հնարավոր էլ չէ մի զեկուցման մեջ այդ ամբողջն ընդգրկել:

Երևույթների, ժողովրդի հոգեբանության բացահայտման համար սահմանափակ թվով բառերը հաճախ չեն բավարարել Գ.Մաթևոսյանին: Խոսակցական տարբերակում և ընդհանրապես տարածված ամենատարբեր բնույթի դարձվածները կազմում են «Մենք ենք, մեր սարերը», «Գոմեշը», «Աշնան արևը», «Տերը» և այլ ստեղծագործությունների ոճավորման հիմնական բաղադրիչները: Սրանց մի մասը զուտ հեղինակային է: Այո՛, հեղինակը դուրս չէ իր ստեղծած և իրական միջավայրից, որտեղ խոսում են ազատ առանց «լեզվաբանի դատողությունների»: Գ.Մաթևոսյանի նախասիրություններից մեկը դարձվածների ստեղծումն է: Այդպիսի ստեղծագործություններում առկայանում են դարձվածներ ստեղծելու զանազան գործոն-միջոցներով: Դարձվածների արժևորման և ըմբռնման հարցում եղած տեսակետներից հաճախ մաթևոսյանական դարձվածները դուրս են մնում: Գ.Մաթևոսյանի զեղարվեստական արձակում դարձվածները և դարձվածի արժեքով կապակցությունները հիմնականում կազմվում են նմանակման, համեմատության, չափազանցության գործոններով: Քիչ չեն նաև այնպիսիները, որոնց կազմավորման հիմքում ընկած են առընթերության զուգորդումը, հակադրումը և պատկերավորման այլ միջոցներ: Հավանաբար այդ է պատճառը, որ շատ կապակցություններ խորթ են, դուրս լեզվական որոշակի օրինաչափություններից, և չեն գտնվում դրանց համարժեքները գրական հայերենում:

Գ.Մաթևոսյանի արձակում գործածված դարձվածների ու կառուցվածքային և իմաստային առանձնահատկություն ունեցող կապակցությունների մանրամասն քննությունը խիստ արժեքավոր կարող է համարվել, սակայն սահմանափակվենք մի ստեղծագործության («Մենք ենք, մեր սարերը») մեջ գործածվող կառույցների բաղադրիչների կապակցության աստիճանների զանազանումով: Կարծում ենք որոշ առումներով դուրսին կդառնա հեղինակի խոսքի անհատականացման, ոճի առանձնահատկության, ստեղծագործաբար մոտեցման յուրահատկությունները պատկերացնելը:

Բաղադրիչների իմաստից հեռացած, դարձվածի կայուն իմաստի հանգող և հաճախականություն ունեցող կապակցություններից նշենք մի քանիսը⁴. «...հեռախոսը գնզգնզաց: Գովիվներն իրար անցան, ապա շվարեցին» /47/ - «գարնացան», «անակնկալի եկան» և այլն: Այսպիսի դարձվածների շարքում կարելի է ընդգրկել «թևը պոկվել» /113/ - «հոգնել», «վիզը ծռել» /126/ - «խեղճանալ», «վեր ընկնել» /87/ - «մնալ», «լեզուն կուլ տալ» /105/ - «լրել, չպատասխանել» և այլն:

Լեզվկանը նկատում է, որ Գ.Մաթևոսյանի արձակի խոսքարվեստում կան բառակապակցություններ, որոնք տվյալ խոսքաշարում դարձվածի արժեք են ստանում: Բառարանային նշանակություն չստացած կապակցությունները նոր են ու ինքնատիպ: Դրանց դարձվածային նշանակությունը բնորոշվում է նրանով, որ հիմնականում արտահայտում են զուտ տեղային, ազգային մտածողություն՝ ինարկե, կապված կենցաղի, կյանքի, ապրելակերպի հետ: Համեմատության միջոցով ստեղծ-

ված դարձվածները խոսքաշարում հիմնականում ստորագելության գործառույթով են, որոնցից նշելի և տպավորիչ են որոշները. «Եվ, ճիշտ է, գյուղը հասն է մերթ, լին տվել այդ նստառուրի շուրջը, ողողել չպաան պոչերով և, աղմուկով, ուրախությունից խոսքերի անկապությամբ, սրամտությունների տափակությամբ, պատավների, կրեխաներին, շան լակտոներին ու մյուս մանր բաները ոտքի տակ գցելով, քիչ առաջ կարկատվող ցանկապառը նորեն քանդելով գյուղը նրան տարել, նստեցրել է սեղանի գլխին...» /51/: Ընդգծված դարձվածը մատնանշում է «ծոզվորի հավաքվելը»: Ճիշտ է, մի տեսակ խոսքի սեղմության միջոցին հակադրվում է, բայց և երևույթի պատկերումը զուեակորվում է: Դարձվածի արտահայտած իմաստին չհարող բաղադրիչներով կառույցներ բավական շատ են. «Մեկ ուրիշը՝ մի Մուշեղ, երվանդ, Հակոբ կամ Ասատուր, երբ հեռու ճանապարհների փոշին ոտքերին կանգնել է գյուղի տակ, Ամտառամեցն ուրախությունից, ճիշտ է, ծղրտացել է, բայց իրեն չի կորցրել...» /51/ - «շրջած, քափառած, ման եկած» իմաստներով, «Արձա-նագրության թղթերը, օրվա լրագրերը քափվեցին սեղանի վրայից, օրացույցը թերթվեց, ջրամանի ջուրը պատերը լիզեց» /104/ - «թափվել», «Փողոց դե-դե-մի գցիր» /127/ - «չլռալի», «Որոշ ժամանակ լուռ էին. երկուսի մտքում էլ լող էին տալիս լեյտենանտի խոսքերը» /89/ - «հիշվել», «Ամտառամեցի մեղվանոցից հարավ մանանաքափ է լինում ծաղկած յորենին, իսկ մեղվանոցից արևելք՝ պայթում է նեկտարամաղիկը» /57/ - առաջինը «փոշուովել», երկրորդը «փթթել» իմաստներով, «-Վեր կացեք, երեխաներ, թխմանը զնաց» /61/ - «ջուրը եռալ», «-էլի փնշը բարձրացրեց շան քանդ, թու՛ ես քու» /76/ - «անձրևել» և այլն:

Դարձվածաբանական միասնություն կազմող կապակցությունների դարձվածային շարքում ընդգրկվել հատկանշվում է արտահայտած փոխաբերական իմաստով: Ճիշտ է, կայուն կապակցությանը բնորոշ հատկանիշները ամբողջական չեն, բայց և նախադասության տարածքում առկայանում են իրև լրացուցիչ իմաստով կառույցներ, պատկերավոր արտահայտություններ: Գ.Մաթևոսյանի արձակի այդ դարձված-կապակցությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ հայերենում տարածված դարձված կազմող հիմնական բաղադրիչների իմաստից բխում է ամբողջ դարձվածի իմաստը:

Իմաստային և կառուցվածքային առումով առանձնահատուկ դարձվածների մի մասը հոմանիշ ձևեր ունի հայերենում, բայց հեղինակային միջամտությունը կառույցի ձևավորմանը հաղորդում է նոր շունչ, երանգ, տալիս զուեակորում արձակի լեզվին հաղորդելով «կենդանություն, հյութեղություն, համապատասխան ուժի և բնականություն»⁵:

Խոսակցական տարբերակին բնորոշ բառերի և դարձվածների մի մասի մերժվելը գրական լեզվից, ամեն դեպքում, բառապաշարի աղքատացման է տանում: Գ.Մաթևոսյանը կենդանի խոսքում տարածված կապակցությունները զեղարվեստական արձակում գործածում է մի դեպքում լեզվի երանգավորման ու ոճավորման, մի այլ դեպքում, որոշակի փոփոխությունների ենթարկելով, գրական լեզվի համար կիրառելի, կենդանի դարձնելու նպատակներով: Ճիշտ է, երբեմն դրանք, այնու-

⁴ Գ.Մաթևոսյան, Երկեր, հ. 2, Ե., 1985:

⁵ Լ.Եզեկյան, նշվ. աշխ., էջ 37:

ամենայնիվ, չեն համարժեքվում փոխարինված դարձվածներին և նույնիսկ հեռանում են իրենց նախնական իմաստից, բայց և այնպես խրախուսվում են տեղին և պատշաճ գործածությամբ. «Ինչուք աղջիկ ես, մի քիչ հաց կեր՝ մարմինդ մի քիչ տեղը բեր, տղես էս է բանակից գալիս է» /44/ - «կազդուրվել, փարթամանալ», խոսակցականում - «ջամր տեղը բերել» - «հանգստանալ», «Քրիկդ փուչիկ է լինում, բաշկինակս հանում էի ու սրբում» /45/ - «քթաքրեքը բափվել», բարբառներում «Ղվինըը՛ պինջը բափվել», հմմտ.՝ «պինջը սրբել չիմացող» - «մանուկ», «- Դա, ես ու քո ցուրը մի օրի ենք» /64/ - «նույն վիճակում», նաև «մի հալի լինել» և այլն: Դ.Մաթևոսյանը վարպետորեն գործածության մեջ է դրել ժողովրդական բառն ու բանը, օգտվել հայերենի տարբեր շրջանների բառազանձից, բառապաշարի տարբեր շերտերից, ստեղծել նոր արտահայտություններ՝ այդ ամենի համադրությամբ ստեղծելով ինքնատիպ և ներգործուն, դարձվածային տպավորությամբ խոսքարվեստ. «Եթե բոլորն էլ օղալուի պես շուռ գալին դեպի աստղերը, և ջրվորը չլսեր կշտացած հողի բեթև տնջողը, մեղվապահը չբռներ հեռու սարափեշերին բացվող նեկտարածաղիկի բուրո՛ւմը... կլիներ մի անհամ, անհա՛մ, անվերջ անհա՛մ աշխարհ» /57/ - «հողը ջրվել», «ծաղկի հոտն առնել», «Տատը լուսաբացի ծուղուղուն է» /61/ - «վաղ արթնացող», «Միրտդ սևանում է և հայիռում ես, հո չես հայիռում» /65/ - «նեղվել»: «Դարձվածի արժեք են ստանում նաև , նկատում է Լ. Եգեկյանը,- լեզվի, այսպես կոչված պատրաստի միավորները, կայուն բառակապակցությունները, առածներն ու ասացվածքները, անեծքներն ու օրհնանքները, որոնք հաճախ են հանդիպում Մաթևոսյանի արձակում ոճական այլևայլ նպատակներով»⁶, մանավանդ որ դրանց բաղադրիչներից մեկը կազմության շարքում փոխաբերական իմաստով է գործածվում հեղինակի՝ դարձված ստեղծելու միտվածությամբ: Մաթևոսյանի արձակի դարձվածների շարքը համալրում են հեղինակի և հերոսների խոսքերում հանդիպող գեղեցիկ և խորինաստ այլ կապակցություններ. «- Չիմացավ էլ, թե ոնց խոսք քաշեց» /96/, «Այդ ժամանակ մաճկալը Անտոնենց նոքար Մուրելանց Անդոն, բռունցքը բափ տվեց դեպի անտառը ու ոտքի ելավ «ես քո...»» /107/, «Պահեստապետիդ երեք ամսվա բանտարկություն են տվել, ահա՛ թե ինչը պիտի ձեր մեջքը կտորի» /108/, ինչպես նաև այնպիսիք, որոնց իմաստներն արդեն իսկ ընկալելի են նախադասության մեջ. «-Փիլիսոփա ես կտրել,- ջղայնացավ նախագահը,- լեզվակոխ ես անում, իսկ ոչխարները որ տեսար՝ փիլիսոփա չէիր, գայլ էիր» /123/, «Իմ հոր հինգ, իմ մոր երկու, իմ հորեղբոր երեք, իմ մեկ մեղալը շարել էի կրծքիս, շապիկը վրայիցս պոկվում էր» /130/, «Պատախազը նրան մուր էր քսում, իսկ նա Իշխանին արձնկում է. - Իշխան, հլա տես է, աթոռը տակին պուճուր է» /140/ և այլն:

Կան կապակցություններ, որոնց սերտության աստիճանի թուլության պատճառով իմաստաբանական պլանում առաջնային և նկատելի են դառնում բաղադրիչների արտահայտած ուղղակի իմաստները: Սրանց դարձվածային արժեքը հաստատվում է, երբ քննվում են դարձվածաբանական կամ դարձվածային կապակցության համակարգում, և իմաստների ձեկնելու կարիք էլ չի զգացվում, ինչպես՝ «Այս գյուղը հազար բելով կապված է աշխարհին. հեռախոսով, հոսքագծով, փոստով, բրդի, մսի,

յուղի մթերմամբ, կոռուպցիայի խանութով, ուսուցման ծրագրերով» /42/, «Երկու շաբաթ անընդհատ անձրևել է, գետինը ոտքիդ տակից փայլում է» /65/, «Եվ ընդհանրապես, լավ կլինի չխաղաք լեյտենանտի անվան ու հացի հետ» /87/, «Այս դերասանը հովիվների մոտ իրեն պրոֆեսորի տեղ է անցրել, կարծում է լեյտենանտին էլ կխաքի» /103/, «Կուսկազմակերպության քարտուղարն աչքերը չոնց հիմա որ նայես՝ լացո կգա» /109/, «Միայն թե մեկը սիրտ արավ ասել» /116/, «Մեղվանցին նախագահի վրա» /143/, «Միայն լացո կգա» /144/ և այլն: Սրանցում չնայած բաղադրիչները իմաստաբանորեն միմյանց նկատմամբ մնում են կախյալ վիճակում, բայց և դարձվածների իմաստը լիովին հասկացվում է բաղադրիչների իմաստից: Արդյունքում ստեղծվում է դարձվածին բնորոշ իմաստաբանական կուռ համակարգ, և կապակցությունը կայուն է դառնում:

Ամենատարբեր բնույթի դարձվածների տեղին և անհրաժեշտ գործածությամբ Դ.Մաթևոսյանի գեղարվեստական արձակը բնորոշվում է խոսքի կենդանությամբ, գեղարվեստականությամբ, հայ գրականության մեջ արձակի նոր և յուրահատուկ լեզվի գոյությամբ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.ա. – Աշնան Արև,	Խ. – Խումհար
Ա.ձ. – Ահնիձոր,	Ծ. – Ծառերը
Բ. – Բեռնածիեր,	Կ.դ. – Կանաչ
Բ.ե.տ.հ.լ. – Բաց երկնքի տակ հին ղաշտը	
լեռներ	Մ. – Մեծամոր
Մ.մ.ս. – Մենք ենք, մեր սարերը	Մ.վ. – Մեր վազքը
Գ. – Գոմեշը,	Պ. – Պատիժը
Թ.օ. – Թափանցիկ օր	Տաշ. – Տաշքենդ
Ի.գ. – Իմ գայլը	

ФРАЗЕОЛОГИЗМЫ В ХУДОЖЕСТВЕННОЙ ПРОЗЕ ГРАНТА МАТЕВОСЯНА

Мгер Кумунц

Резюме

Фразеологизмы разных существей и построений в современной армянской художественной прозе часто можно встретить в произведениях Гранта

⁶ Էջվ. աշխ., էջ 37:

Матевосяна. Они почти равномерно употреблены в речах автора и его героев. В существительных фразеологизмах часто происходит изменение составных частей (одно из -слов получается литературным). Большая часть фразеологизмов, состоящих из прилагательных, новообразования. Большое количество глагольных фразеологизмов были составлены по аналогии и другими образными средствами. Есть сочетания, которые принимают вид фразеологизмов по смысловым особенностям и переносном изложении. Исследованы фразеологические сращения, единства и сочетания. Выясняется, что фразеологизмы в прозе Гранта Матевосяна близки к живому разговорному и своеобразны в художественном отношении.

ՄԱԹԵՎՈՍՅԱՆԱԿԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐ
(ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՎԻՐՎԱԾ
ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70 - ԱՄՅԱԿԻՆ)

МАТЕВОСЯНОВСКИЕ ОТГЛОСКИ
(РЕСПУБЛИКАНСКАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ,
ПОСВЯЩЕННАЯ 70-ЛЕТИЮ ГРАНТА МАТЕВОСЯНА)

REFLECTIONS ON MATEVOSYAN
(REPUBLICAN SIMPOSIUM DEDICATED TO THE
70th ANNIVERSARY OF HRANT MATEVOSYAN)


Խմբագիրներ՝

Բ.գ.դ. Դավիթ Գասպարյան
բ.գ.դ. Լևոն Եզեկյան
բ.գ.դ. Գուրգեն Խաչատրյան
բ.գ.թ. Ալբերտ Դոդոսյան
բ.գ.թ. Արեն Սանթրոյան
բ.գ.թ. Վալերի Փիլոյան
բ.գ.թ. Արտակ Սարուխանյան

Համակարգչային շարվածք և ձևավորում
Կորյուն Շեկոյան
Քիրատինն Գորգինյան

Տպաքանակը՝ 150 օրինակ: Տպագրական 8.5 մամուլ:

«Վանատուր» ՄԴԸ տպարան
ք. Վանաձոր, Տիգրան Լեւոնի 22, հեռ.՝ 2-01-57, 4-02-39, ֆաքս՝ 4-02-39:
e-mail: vanaturv@mail.ru





Խ. Ղարաբեկյան - «Աննիձոր, շոգ կեսօր»



Խ. Ղարաբեկյան - «Գ. Մաթևոսյանի հայրական տունը»

Շապիկի նկարը («Գ. Մաթևոսյանի դիմանկարը») Խ. Ղարաբեկյանի